Աուդիտորական ծառայությունների գնման հայտարարություն

«Դիլիջանի համայնքային կենտրոն» հասարակական կազմակերպությունը հրավիրում է աուդիտորական կազմակերպություններին ներկայացնել առաջարկներ ներքո իրականացվող **"Youth Advocacy for Local Affairs" (YALA)** / «Երիտասարդների շահեր պաշտպանություն տեղական հարցերում» ծրագրի ֆինանսական աուդիտի իրականացման համար:

Ծրագիրն իրականացվում է Եվրոպական Միության INTERREG VI-B NEXT Black Sea Basin 2021-2027 ծրագրի ֆինանսավորմամբ:

Աուդիտի առարկան

Աուդիտի ենթակա է ծրագրի ֆինանսական գործունեությունը և հաշվետվությունները՝ **2026 թվականի հուլիսի 1-ից մինչև 2027 թվականի հոկտեմբերի 31-ը** ընկած ժամանակահատվածի համար:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ / ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ
Ֆինանսական աուդիտի իրականացման ծառայությունների ձեռքբերման վերաբերյալ

Ծառայության անվանումը՝ Ֆինանսական աուդիտի ծառայությունների մատուցում

Կազմակերպությունը՝ «Դիլիջանի համայնքային կենտրոն» ՀԿ

Ծառայության մատուցման վերջնաժամկետը՝ 31.10.2027թ.

«Դիլիջանի համայնքային կենտրոն» ՀԿ-ն Եվրոպական Միության INTERREG VI-B NEXT Black Sea Basin 2021-2027 ծրագրի ներքո իրականացվող **"Youth Advocacy for Local Affairs" (YALA)** ծրագրի շրջանակում հայտարարում է **Ֆինանսական աուդիտի ծառայությունների մատուցման** համար գնային և տեխնիկական առաջարկների ընդունման մասին հայտարարություն:

1. Ծրագրի անվանումը

61 Myansikyan Str.
Dilijan, 3901, Armenia
Phone: +374 60 700 800 (331)

Հայաստանի Հանրապետություն,
ք. Դիլիջան, 3901, Մյասնիկյան 61
Հեռ՝ +374 60 700 800, ներքին՝ 331

INTERREG VI-B NEXT Black Sea Basin 2021-2027 Programme «Երիտասարդների շահեր պաշտպանություն տեղական հարցերում» այսուհետ՝ **(YALA) "Youth Advocacy for Local Affairs" (YALA)**

Ծրագիրն իրականացվում է , «Դիլիջանի համայնքային կենտրոն» ՀԿ

2. Ֆինանսավորող կազմակերպությունը

Ծրագիրը ֆինանսավորվում է **Եվրոպական Միության (ԵՄ)** կողմից՝ Հարևանության, զարգացման և միջազգային համագործակցության գործիքի (**NDICI - Neighbourhood, Development and International Cooperation Instrument**) շրջանակներում գործող **Interreg NEXT Black Sea Basin 2021-2027** ծրագրային հիմնադրամի միջոցներով:

3. Աուդիտի իրականացման ժամանակահատվածը

Աուդիտորական ստուգումներն ընդգրկում են 18 ամիսների աշխատանքային փուլերը և իրականացվելու են **4 հաջորդական փուլերով**.

- **1-ին փուլ:** 2026 թվականի մայիս – օգոստոս (միջանկյալ աուդիտորական ստուգում)
- **2-րդ փուլ:** 2026 թվականի սեպտեմբեր – դեկտեմբեր (միջանկյալ աուդիտորական ստուգում)
- **3-րդ փուլ:** 2027 թվականի հունվար – ապրիլ (միջանկյալ աուդիտորական ստուգում)
- **4-րդ (եզրափակիչ) փուլ:** 2027 թվականի մայիս – հոկտեմբեր *(ներառում է մայիս-օգոստոս և սեպտեմբեր-հոկտեմբեր ժամանակաշրջանների ամփոփումը, ինչպես նաև ծրագրի վերջնական ամփոփիչ աուդիտը)*

4. Աուդիտի նպատակը

Աուդիտորական վերահսկողության հիմնական նպատակն է անկախ մասնագիտական կարծիքի և հավաստիացման տրամադրումն առ այն, որ ,Youth Advocacy for Local Affairsե (YALA) ծրագրի շրջանակներում կատարված բոլոր ֆինանսական ծախսերն իրական են, ճշգրիտ, արդարացված, հիմնավորված սկզբնական հաշվապահական փաստաթղթերով և համապատասխանում են.

- Եվրոպական պառլամենտի և Խորհրդի (EU) 2021/1059 Կանոնակարգի (մասնավորապես՝ 48-րդ և 49-րդ հոդվածների) պահանջներին,

- Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասինե ՀՀ օրենքի և Աուդիտորական գործունեության մասինե ՀՀ օրենքի պահանջներին,
- Ծրագրի գնումների ընթացակարգերի և ծախսերի իրավասության ուղեցույցին,
- Ծրագրի դրամաշնորհային պայմանագրի դրույթներին և ԵՄ ֆինանսական կանոնակարգերին:

5. Աշխատանքների շրջանակը

- Ծրագրի յուրաքանչյուր փուլի ֆինանսական հաշվետվությունների, բանկային քաղվածքների, սկզբնական հաշվապահական փաստաթղթերի, վճարումների և ծախսերը հիմնավորող փաստաթղթերի մանրակրկիտ ուսումնասիրություն և վավերացում (First Level Control / Management verification):
- Ծախսերի համապատասխանության ստուգում՝ համաձայն (EU) 2021/1059 Կանոնակարգի 48-րդ (Management verifications) և 49-րդ (Audits) հոդվածների:
- Գնումների ընթացակարգերի, աշխատավարձերի, հավելյալ ծառայությունների, գործուղումների, միջոցառումների կազմակերպման և անուղղակի ծախսերի օրինականության ու հիմնավորվածության ստուգում:
- Փոքրարժեք ծախսերի գնման ընթացակարգերի ստուգում. Ծրագրի Գնումների Ուղեցույցի համաձայն՝ **2,500 ԵՎՐՈ (EUR)** կամ դրան համարժեք գումարը չգերազանցող ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների ձեռքբերման վճարումները կարող են իրականացվել պարզեցված ընթացակարգով՝ ուղղակի հաշիվ-ապրանքագրերի (invoices) հիման վրա՝ առանց նախնական մրցույթի (tender) կազմակերպման կամ հայտերի ընդունման:
- Յուրաքանչյուր փուլի ավարտին միջանկյալ աուդիտորական հաշվետվությունների կազմում և 4-րդ փուլի ավարտին՝ ծրագրի վերջնական ամփոփիչ աուդիտորական եզրակացության (Final Audit Report) տրամադրում՝ ԵՄ ստանդարտներին համապատասխան:

6. Աուդիտորի որակավորման պահանջները

Մրցույթին մասնակցող աուդիտորական կազմակերպությունը և աուդիտորական թիմը պետք է բավարարեն հետևյալ չափանիշներին.

- **Անկախություն:** Աուդիտորը կամ աուդիտորական ընկերությունը պետք է լինի լիովին անկախ պատվիրատուից (.Դիլիջանի համայնքային կենտրոնե ՀԿ-ից) և ծրագրի համագործակից կողմերից:
- **Պաշտոնական գրանցում և ռեեստր:** Կազմակերպությունը պետք է գրանցված լինի .Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասինե ՀՀ օրենքի համաձայն հավատարմագրված մասնագիտացված կառույցի (Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ - ՀԱՓՊ) աուդիտորական կազմակերպությունների, աուդիտորների և փորձագետ հաշվապահների ռեեստրում (այսուհետ՝ Ռեեստր):
- **Ընկերության փորձառություն:**
  - ՀՀ աուդիտորական ծառայությունների շուկայում գործունեության առնվազն **5 տարվա փորձ**:
  - Վերջին 5 տարիների ընթացքում միջազգային դոնորների կողմից ֆինանսավորված **առնվազն 3 ծրագրերի** ֆինանսական աուդիտի իրականացման փորձ:
- **Աուդիտորական թիմի որակավորման պահանջները:**
  - **Միջազգային որակավորում:** Աուդիտի թիմում պետք է ներգրավված լինի առնվազն մեկ անդամ, ով ունի առնվազն **3 տարվա աշխատանքային փորձ** աուդիտորական ծառայությունների մատուցման ոլորտում և հետևյալ միջազգային որակավորումներից մեկը՝ **ACCA, CPA, CFA** կամ այլ համարժեք որակավորում:
  - **ՀՀ Որակավորում:** Աուդիտի թիմի անդամների **առնվազն կեսը** պետք է ունենան, Աուդիտորական գործունեության մասինե ՀՀ օրենքով սահմանված աուդիտորի որակավորում:
  - **Լեզվական պատրաստվածություն:** Աուդիտի թիմի բոլոր անդամները պետք է ունենան **անգլերեն լեզվի գերազանց իմացություն**

(աուդիտորական հաշվետվությունները և եզրակացությունները ներկայացվելու են անգլերենով):

7. Առաջարկի ներկայացման ձևը և անհրաժեշտ փաստաթղթերը

Հայտատուները պետք է ներկայացնեն իրենց առաջարկները էլեկտրոնային փոստի միջոցով՝ ուղարկելով **contact.us@dcc.am** էլեկտրոնային հասցեին (նամակի թեմա (subject) տողում պարտադիր նշելով՝ *YALA Project - Financial Audit Proposal*):

Առաջարկը պետք է ներառի ստորագրված և կնքված PDF ձևաչափով հետևյալ փաստաթղթերի փաթեթը.

1. **Որակավորման հավաստման փաստաթղթեր և Տեխնիկական առաջարկ:**
   - Հավաստում առ այն, որ կազմակերպությունը գրանցված է մասնագիտացված կառույցի (ՀԱՓՊ) Ռեեստրում:
   - Աուդիտորական կազմակերպության կողմից վերջին 5 տարվա ընթացքում միջազգային դոնորների կողմից ֆինանսավորված առնվազն 3 ծրագրերի աուդիտի իրականացման փաստը հավաստող փաստաթղթեր (պայմանագրերի պատճեններ, հանձնման-ընդունման ակտեր կամ տեղեկանքներ):
   - Աուդիտի թիմի անդամների ցանկը, նրանց ինքնակենսագրականները (CV) և անգլերեն լեզվի գերազանց տիրապետման վերաբերյալ հավաստում:
   - Աուդիտի թիմի անդամների որակավորման վկայականների (ՀՀ աուդիտորի, ACCA, CPA, CFA կամ համարժեք) պատճենները և հավաստումներ առ այն, որ այդ վկայականները գործող են:
   - Աուդիտի իրականացման մեթոդաբանությունը, ռիսկերի գնահատումը, աշխատանքային պլանը և ժամանակացույցը:
2. **Ֆինանսական առաջարկ:**
   - Ծառայությունների ընդհանուր արժեքը (ներառյալ բոլոր կիրառելի հարկերը և տուրքերը)՝ արտահայտված ՀՀ դրամով, ինչպես նաև բաշխվածությունն ըստ աուդիտի 4 փուլերի:

8. Հայտերի ներկայացման վերջնաժամկետը

Հայտերն ընդունվում են մինչև **2026 թվականի սեպտեմբերի 18-ը, ժամը 18:00** (տեղական ժամանակով):

Սահմանված վերջնաժամկետից ուշ ներկայացված հայտերը ենթակա չեն քննարկման:

9. Գնահատման չափանիշները

Ընտրությունն իրականացվելու է, **«Որակի և գնի լավագույն համադրության»** (Quality and Cost-Based Selection - QCBS) սկզբունքով.

- **Տեխնիկական գնահատում (կշիռը՝ 70%):**
  - Ընկերության և թիմի փորձառություն ԵՄ/միջազգային դոնոր ծրագրերում (40%)
  - Առաջարկվող մեթոդաբանություն, ռիսկերի գնահատում և աշխատանքային պլան (30%)
- **Ֆինանսական գնահատում (կշիռը՝ 30%):**
  - Նվազագույն հիմնավորված գին առաջարկած հայտին տրվում է առավելագույն ֆինանսական միավորը:

10. Պայմանագրի նախատեսվող ժամկետը

Ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքվում է **13 ամիս** ժամկետով՝ **2026 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2027 թվականի հոկտեմբերի 31-ը** ընկած ժամանակահատվածի համար:

Պաշտոնական Հղումներ և Աղբյուրներ

- ծրագրի մասին լրացուցիչ տեղեկատվություն՝ Dilijan Community Center NGO / YALA Project Page
- ԵՄ Իրավական ակտի պաշտոնական տեքստ՝ Regulation (EU) 2021/1059 (Articles 48 & 49)
- Ծրագրային հարթակի պաշտոնական կայք՝ Interreg NEXT Black Sea Basin 2021-2027 Official Website

- ՀՀ օրենսդրական հիմք՝ ՀՀ Օրենքը Աուդիտորական Գործունեության Մասին (ARLIS)